

Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Թեմա՝ Անգլերենի ասացվածքների և դարձվածքների ուսուցումը ՀՀ
հիմնական դպրոցում

Ուսուցիչ՝ Հեղինե Մելքոնյան
Դպրոց՝ «Փոքրիկ Իշխան» կրթահամալիր

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն	3
1.Դարձվածքները և ասացվածքները ժամանակակից անգլերեում	5
1.1 Անգլերեն դարձվածքները և դրանց տեղը անգլերենում	6
2.Դարձվածքների և ասացածքների ուսումնասիրման առանձնահատկությունները ավագ դպրոցում	9
2.1 Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը ավագ դպրոցում	12
Եզարակացություն	17
Գրականության ցանկ	19

Ներածություն

Ինչպես հայտնի է, դարձվածքները, ասացվածքները և առածները ցանկացած ժողովրդի մշակութային, պատմական առանձնահատկությունների լեզվական դրսևորումներն են, որոնք հարստացնում են ազգային լեզուն և պատկերավոր մտածողությունը: Մասնավորապես, դարձվածային միավորները «խոսքում պատրաստի վերարտադրվող կայուն արտահայտություններ են, որոնք բնութագրվում են բաղադրիչների մասնակի կամ լրիվ վերախմաստավորմամբ» /Նազարյան, Բաղդասարյան, 2000: 363/, ասացվածքները՝ «խրատական բնույթի կայուն արտահայտություններ են, որոնք շարահյուսորեն կազմավորված են որպես պարզ կամ բարդ նախադասություններ: Ի տարբերություն առածների, որոնք գործածվում են փոխաբերական իմաստով, ասացվածքներն ունեն ուղղակի նշանակություն, թեև ունեն ընդհանրացված իմաստ և լայն մեկնաբանման հնարավորություն են ընձեռում» /Նազարյան, Բաղդասարյան, 2000: 263-277/:

Հայտնի է, որ դարձվածքները և առած-ասացվածքները գոյություն ունեն աշխարհի բոլոր լեզուներում: Դարձվածքաբանությունը ցանկացած լեզվի բառապաշարի ամենաաշխույժ, վառ և ինքնատիպ մասն է: Վերջիններս գիտելիք են փոխանցում ոչ միայն լեզվի, այլև ազգային մտածելակերպի, մշակութի և պատմական փորձի մասին:

Ուսումնասիրելով դարձվածքները և առած-ասացվածքները՝ ակնհայտ է, որ տարբեր ժողովուրդներ կյանքի նկատմամբ ունեն շատ ընդհանրական գաղափարներ: Սակայն պետք է նշել, որ լեզուները նաև տարբերվում են իրենց ինքնատիպությամբ, որոնց վառ արտահայտություններն են հենց դարձվածքները և առած-ասացվածքները: Հետաքրքրական է ուսումնասիրել և համեմատել տարբեր լեզուների բառամթերքը և բացահայտել տարբեր պատկերներում առկայացած ընդհանրական գաղափարները, որոնք արտացոլում են այս կամ այն ժողովրդի լեզվամշակութային յուրահատկությունը: Կարևոր է այն փաստը, որ յուրաքանչյուր լեզվում դարձվածքները կամ առած-ասացվածքները բառացի չեն կարող ընկալվել, եթե նույնիսկ հայտնի է յուրաքանչյուր բառի իմաստը և հասկանալի է քերականական կառուցվածքը: Բառացի թարգմանելիս իմաստը մնում է

անհսկանալի և տարօրինակ: Այսպիսով, դարձվածքների, առած-ասացվածքների թարգմանության դժվարությունները սկսվում են տեքստում՝ նրանց հայտնաբերման (ճանաչման) պահից: Դարձվածային միավորները, առածները և ասացվածքները թարգմանելիս և ներկայացնելիս ավագ դպրոցի աշակերտներին առաջնային խնդիր պետք է լինի ճիշտ թարգմանությունը, իմաստի պահպանումը, արտահայտչականության փոխանցումը: Շատ հաճախ երբ աշակերտները իրենք են փորձում թարգմանել դարձվածքները կատարում են բառացի թարգմանություն, որն աղավաղում է աղբյուր լեզվի լեզվակրի ազգային մտածելակերպը և արդյունքում չեն կարողանում հասկանալ և ընկալել իմաստը:

Այսպիսով, դասերի ժամանակ առնչվելով այս խնդրին և նպատակ հետապնդելով աշակերտների մոտ կարողանալ ներկայացնել այնպես, որ նրանք կարողանան ճիշտ թարգմանել և ընկալել տվյալ լեզվի դարձվածքները և ասացվածքները և կարողանան տեքստերի միջոցով հեշտ սովորեն և մտապահեն:

Անգլերենն է միջազգային լեզու, և այն շատ հարուստ է բառակապակցություններով, ասացվածքներով և ասացվածքներով, որոնք մշտապես հանդիպում են գրականության, թերթերի, ֆիլմերի, ռադիոյի և հեռուստատեսային հաղորդումների, ինչպես նաև մայրենիների առօրյա հաղորդակցության մեջ: Անգլերենի արտահայտությունները շատ բազմազան են, բավականին դժվար նրանց համար, ովքեր սովորում են անգլերեն:

Հետազոտական աշխատանքիս ընթացքում փորձելու եմ ցույց տալ, թե ինչ ժամանակակից մեթոդներ կարելի է կիրառել անգլերենի դարձվածքներն ուսուցանելու համար թե ավագ դպրոցականներին, թե ուսանողներին, թե ոչ մասնագիտական խմբերին, ինչպես սկսնակներին, այնպես էլ լեզվին լավ տիրապետողներին:

Աշխատանքի գործնական արժեքը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքները կարող են օգտակար լինել օտար լեզվի բառապաշարի յուրացման, բանավոր և գրավոր խոսքի հմտությունները կատարելագործելու, անգլերենի ուսուցման մեթոդները բարելավելու, դասապրոցեսը ինտերակտիվ դարձնելու, ավագ դպրոցում անգլերենի գործնական դասավանդման համար:

1. Դարձվածքները և ասացվածքները ժամանակակից անգլերենում

Դարձվածքները լեզվի արտահայտչականության ու պատկերավորման լավագույն միջոցներից են և հանդես են գալիս թե՛ գրավոր, և թե՛ բանավոր խոսքում: Դրանք խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, «խոսքի աղն ու համեմունքը» և դրսևորվում են բոլոր տեսակի ոճերում: Առանձնապես մեծ է դարձվածքի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածքների միջոցով հաճախ խոսքն ազատվում է չորությունից ու երկարաբանությունից: Դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը: Փոխաբերությունը (վերաիմաստավորումը) դարձվածքի էական հատկանիշն է. այն ներհատուկ է ցանկացած դարձվածքի: Խոսքի մեջ դարձվածքները հարաբերակցվում են ինչպես բառերին (անվանողական), այնպես էլ նախադասություններին (հաղորդակցական):

Դարձվածքները հանդիպում են յուրաքանչյուր լեզվի մեջ: Դարձվածքային արտահայտություններ սովորելը և գործածելը օտար լեզվի յուրացման կարևոր և բարդ ոլորտներից են, ուստի որոշակի հմտության աստիճան է անհրաժեշտ: Անգլերենը բացառություն չէ, քանի որ այն ունի մեծ թվով դարձվածքներ, որոնք լայնորեն օգտագործվում են և՛ առօրյա խոսքում, և՛ ակադեմիական համատեքստում: Շատ լեզվաբաններ պնդում են որ դարձվածքները շատ իրական խնդիրներ են առաջացնում օտար լեզու սովորողների համար: Ունկնդիրները կամ ընթերցողները միշտ չէ, որ ընկալում են դարձվածքի իմաստը: Այնուամենայնիվ, բավականին անկանխատեսելի իմաստի պատճառով, դարձվածքները ընկալելն ու մտապահելը, ինչպես նաև կիրառելը հավելյալ դժվարություն է ստեղծում սովորողների համար: Անգլերեն լեզվով հաղորդակցվելիս դարձվածային արտահայտություններ օգտագործելն այսօր համարվում է անգլերենի տիրապետման կարևոր ցուցիչ, քանի որ այն հիմնականում բնորոշ է բնիկ լեզվակիրներին, ովքեր դարձվածքները գործածում են և՛ առօրյա, և՛ գործնական, և՛ ակադեմիական խոսքում:

Դարձվածքը կառուցվածքով երկու կամ ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր (Սուքիասյան 1999: 296): Դարձվածքը սահմանում են նաև որպես փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցություն կամ դարձվածքային նշանակությամբ կայուն կապակցություն կամ կայուն արտահայտություն (Սուքիասյան, Գալստյան 1975: 6): Վ. Վինոգրադովը կարծում է, որ «դարձվածքը լեզվական միավորների համադրություն է, որի իմաստը չի համընկնում դրա բաղադրիչ տարրերի նշանակության հետ: Այս անհամապատասխանությունը կարող է լինել ամբողջականի համատեքստում տարրերի իմաստի փոփոխության արդյունք (Виноградов 1986: 53-79.):

Հենց այս բաղադրիչ տարրերի նշանակության անհամապատասխանությունը ընդհանուր իմաստին առաջացնում է դժվարություն օտար լեզու սովորողների համար:

1.1 Անգլերեն դարձական միավորները և դրանց տեղը անգլերենում

Լեզուների ուսուցման որոշակի փուլում սկսում է սուր զգացվել բառակապակցություններին տիրապետելու անհրաժեշտությունը՝ առանց դրանց խոսքը, նույնիսկ ճիշտ, չոր ու անկենդան, հաճախ ընկալվում է որպես ուսանող: Շատ տարածված սխալն այն է, որ բառակապակցությունները վերագրվում են միայն խոսակցական խոսքին, իսկ երբեմն դրանք շփոթում են ժարգոնի հետ: Հենց դրանում է ասույթների կարևորությունը, որ դրանք գոյություն ունեն խոսքի ցանկացած շերտում (գրական, խոսակցական և այլն), թափանցում և լրացնում են ամբողջ լեզուն:

Իդիոմները արտահայտություններ են, որոնց իմաստը հավասար չէ դրանց բաղկացուցիչ բառերի իմաստին: Իդիոմատիկ արտահայտությունը արտահայտություն է, որի իմաստը դժվար է, իսկ երբեմն անհնար է կռահել՝ հաշվի առնելով առանձին բառերի իմաստները: Բառացի թարգմանված՝ անհեթեթություն

է: «Իդիոմ» բառը գալիս է հունարենից.իդիոմա», որը նշանակում է «առանձնահատկություն», «օրիգինալություն»:

Անկասկած, օտար լեզվի հետ ծանոթանալով, յուրացնելով, ուսումնասիրելով այն՝ աշակերտը միաժամանակ ներթափանցում է ազգային նոր մշակույթ, ստանում ուսումնասիրվող լեզվով կուտակված հոգևոր հսկայական հարստություն: Մասնավորապես, ավագ դպրոցի աշակերտը, ուսանողը, սովորական աշխարհականը, սովորելով օտար լեզու, տվյալ դեպքում անզլերենը, բարձր արդյունավետ հնարավորություն է ստանում միանալու Մեծ Բրիտանիայի ժողովրդի ազգային մշակույթին ու պատմությանը:

Դարձվածաբանությունը, որպես աշխարհի ցանկացած լեզվի անբաժանելի մաս և գանձարանի տեսակ, կարող է հատկապես նպաստել այս նախաձեռնությանը:

Դարձվածաբանական միավորները և դարձվածաբանական համակցությունները արտացոլում են անզլիացի ժողովրդի դարավոր պատմությունը, նրա մշակույթի ինքնատիպությունը, ապրելակերպը և ավանդույթները:

Հետևաբար, դարձվածաբանական միավորները անզլերեն լեզվի խիստ տեղեկատվական միավորներ են:

Օտար լեզու դասավանդողները պետք է հաշվի առնեն դարձվածաբային միավորների դասավանդման գործառույթները, ինչն էլ կնպաստի դրանց ճանաչողական հմտությունների գնահատմանը:Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է դասավանդողի կողմից դարձվածաբային միավորների ճիշտ ընտրությունը և դրանց կիրառումն ակտիվ բառապաշարում: Դարձվածաբային միավորները նպատակահարմար է դասավանդել գրավոր և բանավոր տեքստերի շուրջ աշխատանքի ընթացքում, քանի որ կոնտեքստը տվյալ հանգամանքում ավելի քան անփոխարինելի է: Որևէ հետաքրքիր տեքստի շուրջ աշխատանքը կատարում է լեզվի ոչ միայն մտապահման գործառույթը, այլ նաև նպաստում է տեղեկատվության մտապահմանը և յուրացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտար լեզվի դասավանդման նպատկն է սովորողին պատրաստել լսարանային միջավայրից դուրս հաղորդակցմանը՝ ցանկալի է

զարգացնել սովորողների այնպիսի կարողությունները, որ կծառայեն իրական հաղորդակցական իրավիճակներում:

2.Դարձվածքների և ասացածքների ուսումնասիրման առանձնահատկությունները ավագ դպրոցում

Որոշ հետազոտողներ նշում են, որ «դարձվածքները շփոթություն և դժվարություն են ավելացնում լեզվի ուսուցման մեջ, ուստի նրանք հատուկ տեղ են գրավում բառապաշարի և ընթերցանության ուսուցման գործընթացում» (D'Angelo Bromley 1984: 272): Թերթերն ու ամսագրերը, ժամանակակից երգերն ու հեռուստահաղորդումները, ինչպես նաև գրականությունն ու կինոնկարները դարձվածքների անսպառ աղբյուր են, որոնք անհրաժեշտ է ներառել ուսուցչի դասավանդման մեթոդների գործիքակազմում: Գոյություն ունեն բազմաթիվ մեթոդներ, որոնք օգտագործվում են անգլերենի ուսուցման ընթացքում դարձվածքային սերտաձումներ ուսուցանելու նպատակով: Հիմնական մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ դասական և փոխաբերությունների կոնցեպտուալ ուսուցման մեթոդ: Դասական մեթոդը խրախուսում է բառապաշարի խորացված ուսուցումը համատեքստում: Իսկ փոխաբերությունների կոնցեպտուալ մեթոդը ենթադրում է ոճաբանության, շարադասության, նույնիսկ լեզվամշակույթի որոշակի նախնական գիտելիքներ: Դասական մեթոդը դարձվածքները սովորեցնում է համատեքստում: Լիոնտասը (Liontas 2003: 289-301.) պնդում է, որ համատեքստը կարող է նպաստել բառապաշարի և դարձվածքային արտահայտությունների ըմբռնմանը, ինչպես նաև սովորելուն: Լիոնտասի ուսումնասիրությունը եզրակացնում է, որ «ենթատեքստի բացակայությունը» խոչընդոտներ է ստեղծում «բառապաշար սովորելու և հասկանալու հարցում» (ibid: 288) : Մյուս մեթոդը առաջարկում է անգլերեն դարձվածքները մատուցել փոխաբերությունների կոնցեպտուալ ուսուցման միջոցով: Այս մեթոդը կիրառելու համար անգլերեն սովորողները պետք է որոշակի գիտելիքներ ստանան ոճաբանությունից՝ ինչ է փոխաբերությունը, համեմատությունը և այլն: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր անհատի ընկալումն ու նյութի յուրացումը տարբերվում է այլ սովորողի ընկալման ձևից և տեմպից: Օտար լեզվի դասավանդման մեր փորձը ցույց է տալիս, որ ընդլայնված համատեքստը՝ օրինակ փոքրիկ պատմությունները, ավելի էական ազդեցություն

են ունենում բառապաշարի և դարձվածքային արտահայտությունների մտապահման վրա, քան ուղղակիորեն արտահայտությունների իմաստը ուսուցանելը:

Ավագ դպրոցի և առաջին կուրսի շատ ուսանողներ հաճախ նշում են, որ բավականին լավ տիրապետելով անգլերենին, իրենք գիտակցում են, որ ինչ-որ բան այնուամենայնիվ թերի է լեզվի ընկալման և բանավոր խոսքի ասպեկտներում: Հիմնականում աշակերտներն ու ուսանողները զգում են, որ չնայած այն փաստին, որ տարիներով ջանասիրաբար սովորում են անգլերեն և տիրապետում են լեզվին A1-ից B2+ մակարդակներում, չունեն լսելու, ընկալելու կամ արտահայտվելու խնդիր, սակայն հաճախ դժվարանում են հասկանալ բնիկ լեզվակիրների առօրյա ոչ ֆորմալ խոսքը, ծավալուն հատվածներ ժամանակակից անգլիալեզու գրականությունից, ֆիլմերից և հեռուսաշուններից:

Այս համատեքստում առաջարկում եմ առանձնակի ուշադրություն դարձնել դարձվածքների ուսուցանմանը և դասերը պլանավորելիս շաբաթական 15-30 րոպե ժամանակ հատկացնել դրանց և մշտապես ձեռքի տակ ունենալ նյութերի որոշ ընտրանի՝ դասերը աշխուժացնելու և ուսանողներին մոտիվացնելու նպատակով: Դարձվածքների ուսուցանումը բարելավելու և ավելի լավ արդյունքների հասնելու նպատակով դասերը պլանավորելիս կարելի է համակցել ուսուցման տարբեր ժամանակակից մեթոդներ: Առցանց ռեսուրսների բազմազանության պարագայում ուսուցիչների համար ավելի հեշտ է դարձել նյութերի և դասավանդման գաղափարների փոխանակումը և ժամանակակից մեթոդների մշակումն ու կիրառումը:

Դարձվածքային միավորների դասավանդումը համարվում է օտար լեզվի դասավանդման գործընթացում գուցե, ամենանուրբ բաժիններից մեկը, և առաջին հայացքից հաճախ կասկածելի է թվում դրանց դասավանդման կարևորությունը: Լեզվի դասավանդման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում հաղորդակցական կարողությունների զարգացմանը, աշակերտների օտարալեզու խոսքի ձևավորմանը: Այդ համատեքստում նույնպես դարձվածքային միավորների ուսումնասիրությունն նպատակահարմարությունը կասկած չի հարուցում: Դարձվածքային միավորների միջոցով հնարավոր է դառնում արտահայտել

զգացմունքները, վերաբերմունքը, անել դատողություններ, խոսքը դարձնել պատկերավոր, տպավորիչ, հուզական:

Ակնհայտ է, որ օտարալեզու խոսքը միայն արտադրողական մակարդակում կարող է հարուստ լինել դարձվածքային միավորներով: Ի շնորհիվ իրենց, բազմակի հաղորդակցական նշանակություն ունեցող կարողությանը, դարձվածքային միավորումները նպաստում են խոսքի հարստացմանը և կարող են գործածվել տարբեր ենթատեքստերում /Մարտինես,1996:33/: Նման կայուն արտահայտությունների տեղին կիրառումը բանավոր խոսքում ոչ միայն խոսքն ավելի կենդանի է դարձնում, այլ նաև ավելի անկեղծ և բնական մթնոլորտ է ստեղծում, ինչին և ձգտում են բոլոր օտար լեզու դասավանդողներն ու սովորողները: Խոսողը միշտ չէ,որ հաղորդակցվելիս, այս կամ այն նկատառումներով, նույնությամբ արտահայտում է այն, ինչ մտածում է: Նման դեպքերում նա կարող է դիմել դարձվածքային միավորների օգնությանը՝ ենթադրելով, որ խոսակից կանի համապատասխան եզրակացություններ և լիովին կնքնի իրեն ուղղված միտքը:

Ընդհանուր առմամբ, ավագ դպրոցում օտար լեզուներ սովորող աշակերտները սիրով են ուսումնասիրում անգլերեն լեզվի դարձվածքային միավորները՝ աույթները, ասացածքները, դարձվածքները, առածները, քանի որ դրանք կազմում են տվյալ լեզվի ատաղձը:

2.1 Դարձվածքների և ասացվածքների ուսուցումը ավագ դպրոցում


Դարձվածքների ուսուցանումը կարելի է խմբավորվել ըստ կոնկրետ մեկ թեմայի կամ բազմազան թեմաների շուրջ: Յուրաքանչյուր մոտեցում ունի իր առավելությունները: Թեմատիկ խմբավորումը ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել որոշակի թեմայի շուրջ բառապաշար և արդյունավետ կերպով հարստացնել թեմատիկ գիտելիքները: Մյուս կողմից, տարբեր տիրույթներին վերաբերող դարձվածքները խառնելը լավ միջոց է նախկինում սերտած արտահայտությունները ամրապնդելու համար:

Առաջարկում եմ օգտվել www.idiomconnection.com կայքի հնարավորություններից, քանի որ այն ներառում է մեծ թվով հաճախ կիրառվող դարձվածքներ, որոնք խմբավորված են ինչպես այբբենական կարգով, այնպես էլ թեմատիկ գլխաբառերով: Օրինակ՝ հնարավոր է որոնել դարձվածքներ, որոնք սկսվում են «լ» տառով կամ դարձվածքներ, որոնց առանցքային բառը մարմնի մաս, հագուստ, տրանսպորտ, աշխատանք և այլն ցույց տվող բառ է: Յուրաքանչյուր դարձվածքի հոդվածը ներառում է սահմանում և օրինակելի կիրառում նախադասության մեջ: Կարևորն այն է, որ յուրաքանչյուր շարքի վերջում կա բազմակի ընտրության (multiple choice) առաջադրանք՝ պատասխանի կոճակով, որը թույլ է տալիս սովորողներին ինքնուրույն ստուգել իրենց գիտելիքները: Այս կայքը կարելի է օգտագործել և՛ դասարանական աշխատանքի՝ ինտերակտիվ գրատախտակի առկայության դեպքում, և՛ ինքնուրույն աշխատանքի, և՛ տնային հանձնարարությունների համար:

Դարձվածքային միավորները ճիշտ օգտագործելու համար նպատակահարմար է դասապրոցեսի ընթացքում կիրառել դերասյուժետային խաղեր, գծագրական դասակարգիչներ, ինտերակտիվ առաջադրանքներ՝ ստեղծելով համապատասխան իրավիճակներ դրանք տարբեր իրական խոսքային իրավիճակներում գործածելու համար:

Անգլերենի դարձվածքների ուսուցանումը առավել գրավիչ է գունավոր պատկերավոր քարտերի միջոցով, որոնք պատկերում են դարձվածքի բառացի

Իմաստը՝ այսպիսով ստեղծելով իմացական դիսոնանս, որը նպաստում է դարձվածքի էֆեկտիվ մտապահմանը: Տես նկար՝ 1,2,3



Պատկերավոր քարտերի մեթոդի ընթացքում յուրաքանչյուր դարձվածքի ուսուցանումը բաժանում ենք երեք փուլի: Նախ, սովորողներին ներկայացվում է գունավոր պատկերը՝ ինտերակտիվ գրատախտակին, համակարգչի վրա կամ գունավոր տպագրությամբ, որը գրոտեսկային կերպով պատկերում է դարձվածքի առանձին տարրերի իմաստը, այնուհետև տալիս ենք բացատրությունը անգլերենով . անհրաժեշտության դեպքում թարգմանում ենք նաև հայերեն, ապա միասին դիտարկում ենք գործածումը օրինակելի նախադասության մեջ: Վերջում սովորողներին առաջարկվում է կազմել իրենց սեփական նմանատիպ նախադասություն: Բազմաթիվ կայքեր առաջարկում են դարձվածքների առանձին տարրերը բառացիորեն նկարագարող պատկերներ: Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ է ունենալ նախօրոք տպած պատկերների պաշար կամ կրիչ՝ համակարգչով կամ ինտերակտիվ գրատախտակով ցուցադրելու համար: Ուսուցանման այս տարբերակը, թերևս, ավագ դպրոցի աշակերտների ամենանախընտրելին է, քանի որ ցանկացած տարիքի և գիտելիքների տեր աշակերտները տպավորվում են զվարճալի թեմատիկ նկար-քարտերով:

Թեմատիկ նկար-քարտերով ուսուցանումը կատարվում է շաբաթը մեկ-երկու անգամ, յուրաքանչյուր անգամ տրամադրելով 10-30 րոպե՝ կախված դասի նպատակից: Յուրաքանչյուր հաջորդ դասին, նախորդ թեման ամրապնդելու նպատակով, ուսուցիչը կարող է ցուցադրել երկուսից մինչև հինգ քարտ արդեն ծանոթ դարձվածքների պատկերով և առաջարկել բազմակի ընտրության (multiple choice activity) միջոցով ընտրել ճիշտ տարբերակը . առաջադրանքը կարելի է կատարել և՛ խմբային, և՛ անհատական աշխատանքի տարբերակով: Տես՝ նկար 4,5:



BREAK THE ICE

- A: you are very strong
- B: you like cold drinks
- C: open the way



- A: ride a horse
- B: stop your car
- C: be patient

Երբեմն աշակերտները ստանում են անհատապես պատասխանելու հնարավորություն, երբեմն բաժանվում են երկու մրցող խմբերի (կախված նրանից, թե որքան ժամանակ ունենք): Երբ ներկայացնում ենք նոր դարձվածքներ, նույնպես կարող ենք կիրառել քարտերը: Տվյալ պարագայում առաջարկում ենք նրանց կռահել՝ հիմնվելով նկարի և բառերի վրա: Ապա բացատրում ենք իմաստը և բերում օրինակ:

Յուրաքանչյուր անգամ ներկայացվում են 7-10 թեմատիկ դարձվածքներ: Հաջորդ քայլը ամրապնդող առաջադրանքներն են, որոնցից ամենաէֆեկտիվը կարելի է համարել «լրացրու բաց թողնված բառերը» (cloze passage): Սա ընթերցանության ընկալման առաջադրանք է, որտեղ բառերը համակարգված կերպով բաց են թողնված: Ուսանողները լրացնում են բացթողումները: Նրանց պատասխանները ճիշտ են համարվում, եթե դրանք ճշգրիտ համընկնում են բացակայող բառերի հետ:

Օրինակ՝ *Fill the gaps with words from the box. Sometimes, more than one answer is possible.*

Someone has let the _____ out of the bag.

Tina knows all about her 'surprise' birthday party.

lips hat cat wraps dark

“Do you have any similar idioms in your own language?” կարևոր հարցերից է, որն անհրաժեշտ է պարբերաբար ուղղել ուսանողներին և խրախուսել նրանց գտնել հայերենում անզլերեն դարձվածքների համարժեքները:

Իսկ որպես տնային հավելյալ աշխատանք կարելի է առաջարկել աշակերտներին հետևյալ տարբերակը՝ գրել կարճ էսսե կամ թեմատիկ շարադրություն՝ օգտագործելով հինգ նոր, հինգ արդեն յուրացրած դարձվածք: Մոտիվացնելու նպատակով թեմայի ընտրությունը հաճախ թողնում ենք աշակերտների հայեցողությանը:

Համատեքստից իմաստի կռահումը (“Guessing from context”) ևս մեկ առաջադրանքի տարբերակ է: Այն դրդում է աշակերտին ուշադրություն դարձնել համատեքստին և դարձվածքի իմաստը կռահել տեքստի բանալի բառերից և նախադասություններից: Հոգեբանները պնդում են, որ կամաձին ուշադրությունը կենտրոնացնելիս բարձրանում է աշակերտների կողմից բառերը հիշելու հավանականությունը: Փոքրիկ պատմվածքներ և համատեքստային աշխատանք է առաջարկում հետևյալ կայքը, <http://www.englishdaily626.com/idioms>, որտեղ յուրաքանչյուր դարձվածք օգտագործված է երկխոսություններում կամ կարճ պատմություններում:

Դարձվածքները յուրացնելու և ամրապնդելու հաջորդ աշխատանքն է ընդգծված բառերը փոխարինել թեմատիկ դարձվածքներով:

Օրինակ՝ *“Replace the underlined part of the sentence with a suitable idiom”*. Նոր դարձվածքներ ներկայացնող և գիտելիքը ամրապնդող մեկ այլ տեսակի առաջադրանք առաջարկում ենք կատարել դասարանում և ստուգել հենց տեղում. ավագ դասարանների աշակերտներին առաջադրանքի համար հատկացվում է 15-20 րոպե ժամանակ: Առաջարկվում է դարձվածքներով համեմված տեքստ, որոնց իմաստը անհրաժեշտ է կռահել համատեքստից. տեքստն ընթերցելուց հետո անհրաժեշտ է առաջին սյունյակում տեղադրված համատեքստից կռահած դարձվածքը համապատասխանեցնել երկրորդ սյունյակի բացատրություններին:

Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է գործի դնել իր երևակայությունը և տարբեր նպատակներով կիրառել տվյալ կայքի ընձեռած հնարավորությունները:

Աշխատարան

Տևողությունը՝ 30-40 րոպե

Դասի ընթացքը՝

1. Զրույց՝ «Դարձվածքը և դրա նշանակությունը: Դարձվածքի առաջացման պայմանները, աղբյուրները»: Ասացվածքների ընդհանրական իմաստը:
2. Դարձվածքային և ասացվածքային մտածողության տարբերությունները տարբեր լեզուներում (մասնակիցները հիշում-առաջարկում են հայերեն դարձվածքներ, ապա միասին գտնում են դրա համարժեքը այլ լեզուներում, փորձում են բացատրել փոխաբերության իմաստը): Դարձվածքների և ասացվածքների կիրառումը տարբեր իրադրություններում տարբեր լեզուներով (որ ոճին են հատուկ դարձվածքները, որտեղ ոչ մի կերպ չի կարելի դարձվածք օգտագործել, ինչ է տալիս խոսքին և ինչ կիսաթարի, եթե չափից շատ դարձվածքներ օգտագործենք):
3. Փորձ-խաղ՝ բաժանվում ենք խմբերի, փորձում ենք միայն դարձվածքներով հարց ու պատասխան կազմակերպել: Թարգմանում ենք արդեն ասածը տարբեր լեզուներով:
4. Ամփոփում՝ ով ինչ սովորեց (թեկուզ մի դարձվածք այս կամ այն լեզվով):

Եզրակացություն

Անգլերենը, արտահայտչական միավորների և դարձվածքաբանական շրջադարձերի իր ընդարձակ համակարգում առկայության առումով, թերևս ամենահարուստ լեզուներից մեկն է: Նրա կառուցվածքում հսկայական շերտ են զբաղեցնում դարձվածքաբանությունները:

Լեզվի մեջ դարձվածքաբանական միավորների առկայության տոկոսը սերտորեն կապված է որոշակի ժողովրդի մշակույթի զարգացման ցուցանիշի հետ, քանի որ դարձվածքաբանական միավորները և դրանց ստուգաբանությունը հենց այս մշակույթի արտահայտությունն են:

Դարձվածքային միավորների դասավանդումը համարվում է օտար լեզվի դասավանդման գործընթացում գուցե, ամենանուրբ բաժիններից մեկը, և առաջին հայացքից հաճախ կասկածելի է թում դրանց դասավանդման կարևորությունը: Լեզվի դասավանդման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում հաղորդակցական կարողությունների զարգացմանը, աշակերտների օտարալեզու խոսքի ձևավորմանը: Այդ համատեքստում նույնպես դարձվածքային միավորների ուսումնասիրության նպատակահարմարությունը կասկած չի հարուցում: Դարձվածքային միավորների միջոցով հնարավոր է դառնում արտահայտել զգացմունքները, վերաբերմունքը, անել դատողություններ, խոսքը դարձնելով պատկերավոր, տպավորիչ, հուզական:

Այսպիսով, համապատասխան բառապաշարի ուսուցումը կարելի է հաճելի և զվարճալի դարձնել ուսումնառության յուրաքանչյուր մակարդակում՝ A1-ից մինչև B2+՝ կիրառելով պատկերավոր նկարների հուշագրության մեթոդը, «լրացրու բաց թողնված բառերը» առաջադրանքը, «կռահիր համատեքստից» մեթոդը, «Ժամանակագրական հերթականության/պատմությունների հորինում» մեթոդները: Նկարագրված մեթոդները նպաստում են բառապաշարի յուրացմանը և բանավոր և գրավոր խոսքի հմտությունների զարգացմանը, հարստացնում են մասնագետի օտար լեզվի ուսուցման մեթոդական գործիքակազմը, դասապրոցեսը դարձնում են ինտերակտիվ և մասշեղի, նպաստում են աշակերտների ներգրավվածությանը և մատուցվող նյութն անմիջապես լսարանում ընկալելուն ու յուրացնելուն: Առաջարկվող մեթոդների բազմազանությունը կարող է

պարբերաբար օգտագործվել դասապրոցեսի ընթացքում՝ ապահովելով աշակերտների բարձր ներգրավվածությունն ու մոտիվացիան: Արդյունքում աշակերտներն ավելի լավ պատկերացում են կազմում դարձվածքների և դրանց գործածման տիրույթների մասին:

Գրականության ցանկ

1. Կունին Ա.Վ. Ժամանակակից անգլերենի դարձվածքաբանություն. - Մ.: Միջազգային հարաբերություններ, 1996.
2. Սուքիասյան Ա, Գալստյան Ս, Հայոց լեզվի դարձվածքաբանական բառարան: Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, Երեւան, 1975,
3. Adkins, P.. Teaching idioms and figures of speech to non-native speakers. Modern Language Journal, 1968
4. Carter, R., Goddard, A., Reah, D., Sanger, K., & Bowing, M. . Working with texts. A core introduction to language analysis (2nded.). London: Routledge, 2001
5. Lundblom, E. G. E., & Woods, J., J.. Working in the classroom: Improving idiom comprehension through class-wide peer tutoring, Communication 174 Disorders Quarterly, 2012, 33 (4), pp 202-209
<https://doi.org/10.1177%2F1525740111404927>
6. Moon, R. Fixed expressions and idioms in English. Oxford: Oxford University Press, 1998
7. Szczepaniak, R., & Lew, R.. The role of imagery in dictionaries of idioms. Applied Linguistics, 2011, 32 (3), pp 323-347 McCarthy, M., O’Keeffe, A., & Walsh, S..
8. Vocabulary matrix: Understanding, learning, teaching. Hampshire: Heinle, CENGAGE Learning, 2010, p 68